ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2496-Ա/2 «30» դեկտեմբերի 2022թ.

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի «Երիտասարդություն» գլխի 51-րդ կետի 51.2-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Երիտասարդական աշխատանք» վերապատրաստման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը՝ որպես լրացուցիչ կրթության փորձնական մոդուլային ծրագիր (այսուհետ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Ծրագիրը կիրառության մեջ է դրվում 1 տարի ժամկետով՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

12/29/2022

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի թիվ հրամանով

Վերապատրաստման մոդուլի անվանումը

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մոդուլի նպատակը

Մոդուլի նպատակն է մասնակցի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ երիտասարդական աշխատանքի սկզբունքների, տեսակների, երիտասարդական աշխատողին ներկայացվող մասնագիտական պահանջների, էթիկայի նորմերի, երիտասարդների անձնային աճի, երիտասարդների կարողությունների բացահայտման ու զարգացման, նախասիրությունների բավարարման մեխանիզմների, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց մասնակցության ապահովման գործիքակազմի, երիտասարդությանն ուղղված ծրագրերի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման վերաբերյալ:
Վերապատրաստումը նախատեսված է երիտասարդական աշխատանքով զբաղվող բոլոր մասնագետների, երիտասարդների հետ գործնականում աշխատողների, երիտասարդական պետական քաղաքականության հետ կապված գործառույթներ իրականացնող անձանց համար:

Մոդուլի մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է բարձրագույն կրթության որակավորում, ինչպես նաև՝ երիտասարդության ոլորտում առնվազն 1 (ցանկալի է 3) տարվա փորձառություն, կամավորական աշխատանքի փորձառություն և երիտասարդական քաղաքականության վերաբերյալ, երիտասարդական աշխատանքի իրականացման բազային գիտելիքներ:

Մոդուլի գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր թեմայի և ուսումնառության արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարման չափանիշները

1. Մասնակիցը ձևակերպել է տվյալ տիրույթում իր անհատական և կազմակերպական նպատակները:
2. Մասնակիցն առանց էական թերացումների կատարել է անհատական և խմբային հանձնարարությունները:
3. Մասնակիցը ներդրել է ստացված՝ տվյալ տիրույթին վերաբերվող գիտելիքներն ու հմտություններն իր անհատական նախագծում:

Մոդուլի թեմաները

№	Թեման	Առկա ժամաքանակ	ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ
1)	Աշխատանք երիտասարդների հետ, երիտասարդներ և երիտասարդական աշխատողներ	6	12
2)	Երիտասարդական աշխատանքի զարգացում, Երիտասարդական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ, մասնագիտական էթիկա, երիտասարդական քաղաքականություն և ծրագրեր	4	8
3)	Երիտասարդական աշխատողը՝ որպես թիմի անդամ, Հաղորդակցման ոճերը, Միջմասնագիտական հաղորդակցություն	6	14
4)	Անձի ճանաչման և զարգացման փուլեր, մոտիվացիա. Երիտասարդության տարիք	2	6

5)	Երիտասարդների սոցիալական հիմնախնդիրները. Ինչո՞ւ և ինչպե՞ս	6	14
6)	Ուսումնառության տեսակները. Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն և կենսափորձ	4	10
7)	Ղեկավարման հմտություններ, առաջնորդության զարգացում, մասնագիտական կողմնորոշում	4	8
8)	Կոնֆլիկտների հաղթահարում. ներանձային և միջանձնային կոնֆլիկտներ	6	14
9)	Սակավ հնարավորություն ունեցող երիտասարդների հետ աշխատանքի հմտություններ	4	8
10)	Աջակցություն և խթանում երիտասարդների ինքնակազմակերպմանը և համախմբմանը	6	14
11)	Երիտասարդների՝ հանրային կյանքին մասնակցության խթանման գործիքակազմ և մեթոդներ	4	8
12)	Ֆոնդահայթայթում, ռեսուրսների ներգրավում	4	10
13)	Ծրագրերի մշակում, իրականացում, մշտադիտարկում և գնահատում	6	16
14)	Երիտասարդական միջազգային համագործակցության ծրագրեր	2	6
	Ընդհանուր	**64**	**148**

Գնահատման միջոցները

Անհատական և խմբային հանձնարարությունների կատարման, ակնկալվող կարողությունների՝ անհատական նախագծերում գործադրման, մասնակիցների բարձրացրած հարցերի, հետադարձ կապի և մասնակցության մշտադիտարկում և ինքնագնահատում

Ծրագրային մանրամասները.

- Ակնկալիքների ձևակերպում, նպատակների սահմանում
- Երիտասարդական աշխատանքի զարգացման փուլային առանձնահատկությունների վերհանում մտագրոհի մեթոդի կիրառման միջոցով
- Երիտասարդական աշխատանքի տեսակների քննարկում
- Մասնագիտական թիմային էթիկայի կարևորության և հաղորդակցման տեխնիկաների և ոճերի քննարկում
- Ուսումնառության ֆորմալ և ոչ ֆորմալ տեսակների ներկայացում
- Կոնֆլիկտների տեսակների և դրանց հաղթահարման եղանակների քննարկում՝ դերային խաղերի միջոցով
- Երիտասարդների հանրային կյանքին մասնակցության ձևերի մշակում խմբային աշխատանքների միջոցով
- Ռեսուրսների ներգրավման առանձնահատկությունների և միջոցների վերհանում ծրագրի մշակման միջոցով
- Երիտասարդական քաղաքականության ձևավորման հիմնական ուղղությունների քննարկում
- Երիտասարդական աշխատանքի ներկա մարտահրավերները Հայաստանում. World Café ֆորմատով լուծումների որոնում և համակարգում:

Նվազագույն շեմը.

Մասնակիցը կարողանում է ձևակերպել երիտասարդական աշխատանքի նպատակները, տեսակները և այլ ենթաթեմաների վերաբերյալ պատասխանները, առանց թերացումների կատարել անհատական և խմբային հանձնարարությունները, պատկերացնում է, թե ինչպե՞ս ներդնել ստացված գիտելիքն ու հմտություններն անհատական նախագծում:

Ուսոցման մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ուսուցման մեթոդաբանությունը.

Ուսուցումն իրականացվելու է դասախոսությունների (պրեզենտացիաների) և գործնական պարապմունքների միջոցով: Մասնակիցներն ուսումնասիրում են ուսումնական նյութեր, ունկնդրում փորձագետներին, կատարում անհատական և խմբային հանձնարարություններ, տալիս են իրենց հարցերը, լսում և քննարկում կարծիքներ, իրականացնում ինքնագնահատում: Փորձագետներն իրականացնում են փոխգործուն դասախոսություններ, տալիս անհատական և

խմբային հանձնարարություններ, իրականացնում խմբային քննարկումներ, կազմակերպում հարց ու պատասխան, տրամադրում անհատական հետադարձ կապ:

Անհրաժեշտ ռեսուրսները.

Ուսումնական տարածք՝ ապահովված դասընթացի համար անհրաժեշտ գրատախտակով, պրոյեկտորով և համակարգչով: Աշխատանքային տարածքը պետք է ներառի 1 ընդարձակ սրահ դասախոսությունների համար՝ համապատասխան քանակությամբ սեղան-աթոռներով, և առանձին հարմարավետ անկյուններ՝ համատեղ գործնական աշխատանքների համար:

Անցկացնող մասնագետները

Դասընթացավարներ՝

- երիտասարդական աշխատանքի առնվազն 3 (ցանկալի է 5) տարվա փորձ,
- ՀՀ երիտասարդական ոլորտի իրազեկություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. ուսումնասիրություններ և այլն),
- բարձրագույն մասնագիտական կրթություն,
- ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության հիմնական մոտեցումներին և գործիքարանին տիրապետում,
- ոչ ֆորմալ կրթության ծրագրերում ուսուցողական թիմերում ներգրավվածության 3 տարվա փորձառություն,
- երիտասարդական աշխատանքի հետ կապված ուսուցողական նյութերի մշակման փորձ,
- տեխնիկական բնութագրում նշված ներկայացված թեմաների շուրջ առնվազն 5 ուսուցանման ծրագրերի իրականացման փորձ,
- տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն,
- գրագետ բանավոր և գրավոր խոսք, արդյունքների համապարփակ ներկայացման ունակություն,
- վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն:
-

Դասընթացի կառուցվածքի փորձագետ՝

- երիտասարդական աշխատանքի առնվազն 3 (ցանկալի է 5) տարվա փորձ,

- ՀՀ երիտասարդական ոլորտի իրազեկություն (երիտասարդական պետական քաղաքականություն, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտասարդության ոլորտում կատարված ուսումնասիրություններ, զեկույցներ և այլն),
- տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն,
- վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն,
- թիմում աշխատելու հմտություններ:

<u>Մասնակիցների ընտրության փորձագետ՝</u>

- երիտասարդական աշխատանքի առնվազն 2 տարվա փորձ,
- ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտասարդական պետական քաղաքականություն, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտասարդության ոլորտում կատարված ուսումնասիրություններ, զեկույցներ և այլն),
- տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն,
- վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն,
- մեծ ծավալի տեղեկատվության հետ աշխատելու հմտություն:

Առաջարկվող մոդուլի ավարտին մասնակիցների կողմից ձեռք բերվող ուսումնառության արդյունքներ

- Նախաձեռնել և իրականացնել երիտաարդական նախագծեր՝ ինքնուրույն գտնելով լուծումներ քննադատական մտածելակերպի և խնդիրների լուծման հմտությունների գործադրման շնորհիվ,
- Ձևավորել երիտասարդների շրջանում վստահություն և հմտություններ արդյունավետ հաղորդակցության միջոցով,
- Ինքնուրույն կիրառել ձեռքբերված գիտելիքն ու հմտությունները տարբեր իրավիճակներում,
- Առաջնորդել երիտասարդներին իրենց խնդիրները ճանաչելու և լուծումներ գտնելու հարցում,
- Աջակցել և խթանել երիտասարդների ինքնակազմակերպմանը, նրանց նախաձեռնությունների իրականացմանը,
- Ձևավորել երիտասարդական թիմեր և առաջնորդել դրանք,
- Ստանձնել երիտասարդական աշխատողի դեր:

Մոդուլի ամփոփիչ գնահատման մեթոդ

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կատարվել են ինքնուրույն տնային առաջադրանքների 80 տոկոսը, և ապահովվել է ընդհանուր դասընթացին մասնակցության 80 տոկոսը:

Մոդուլի տևողությունը, բեռնվածության ծավալը

Մոդուլի տևողությունը՝ առավելագույնը 3 ամիս՝ 212 ժամ բեռնվածությամբ, որից 64-ը՝ առկա ժամաքանակ, 148-ը՝ ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ:

Ուսումնական խմբի խտությունը (ընդհանուր, խմբային և անհատական)

Ընդհանուր խումբը մինչև 25 մարդ, խմբային և անհատական աշխատանքեր: